



Լրատու Newsletter


ԳԷՈՐԳ ԹԱՋԹԱԵԱՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ
K TAHTA ARMENIAN COMMUNITY SUNDAY SCHOOL

Email: info@armenianschool.org.uk
armenianschool@hotmail.co.uk

Website: www.armenianschool.org.uk

Օգոստոս 2015
Լրատու թիւ 5

Ողջոյնի Խօսք




ԱՆԻ

Աւարտուեց 2014-2015 ուսումնական տարին, որը շատ հետաքրքիր և բեղմնաւոր էր մեր վարժարանի համար:

Վարժարանի յաջողութեան անխոնջ մշակներն են եղել մեր ուսուցչուհիները, հոգաբարձուները, ծնողական յանձնախումբի անդամները, նախկին ծնողները, վարժարանի բարեկամները:

Վարժարանի Կրթական յանձնախումբն անցկացրեց աւարտական դասարանի քննութիւնները: Մեր աշակերտները յաջողութեամբ յանձնեցին Հայոց լեզուի բանաւոր, գրաւոր, կարդալու և առաջին անգամը լինելով լսելու քննութիւնները:

Այս տարի լրացաւ Հայոց Յեղասպանութեան 100 ամեայ տարելիցը: Մեր վարժարանում աշակերտներին ցեղասպանութիւնը ներկայացնելու համար կազմակերպել ենք բազմաթիւ ձեռնարկներ: Այդ աշխատանքները մենք սկսել էինք անցեալ տարուանից:



ՎԱՆ

1. 2014 թուականի ապրիլին ՀՀ գիտութեան և կրթութեան նախարարութիւնը կազմակերպել էր «1 դար և աւելին» նկարչական մրցոյթը, որը նուիրուած էր Հայոց Յեղասպանութեան 100 ամեայ տարելիցին: Մեր վարժարանի աշակերտները մասնակցեցին այդ մրցոյթին և արժանացան մրցանակի:

2. 2015 թուականի ապրիլին Վարժարանի բոլոր աշակերտները մասնակցեցին «Յիշում եմ, Պահանջում եմ» անմոռուկ ծաղկի պատրաստմանը, նրանք բոլորը փոքր անմոռուկ ծաղիկներ պատրաստեցին և միացրեցին իրար և պատրաստեցին մի մեծ անմոռուկ ծաղկեպսակ, որը ապրիլի 26-ին նուիրեցինք Սուրբ Եղիշէ եկեղեցուն: Երեխաները շատ լաւ հասկացան «Յիշում եմ, Պահանջում եմ» -ի իմաստը:

3. Ապրիլի 19-ին Վարժարան հրաւիրեցինք նախկին ուսուցչուհի BBC-ի ժուռնալիստ Անի Քինգ Անդերվուդին: Նա շատ տպաւորիչ ներկայացրեց իր, իր մօր և մօրաքրօջ այցը Կեսարիա իրենց հայրական տունը, որը 20 ական թուականներին իր տատը և պապը լքել էին տեղի իշխանութիւնների պահանջով: Նա շատ տպաւորիչ ներկայացրեց մեր ժողովրդի կորուստը, երեխաները բազմաթիւ հարցերով պարզաբանեցին և հասկացան տեղի ունեցածը, զգացին կորստի ցաւը և հասկացան ամենակարևորը պահանջատիրութիւնը: Վերջում Անի Քինգ Անդերվուդը երեխաներին առաջարկեց մի նախագծային աշխատանք, այն է՝ բոլորը գնան տուն և իրենց տատիկներից ու պապիկներից իմանան իրենց արմատների մասին, ինչո՞ւ և ինչպե՞ս են իրենց նախնիները հեռացել իրենց պատմական հողերից:

4. Ապրիլի 25-ին Վարժարանը՝ աշակերտերի, ուսուցիչների և ծնողների մասնակցութեամբ, ներկայացրեց մի հրաշալի թատրոն «Հայոց Յեղասպանութեան վերապրողների յուշերը» խորագրով: Ծրագիրը կազմուած էր 2 մասից: Առաջին մասում ներկայացրինք, թէ ինչպէս են Վանից հեռացել Վանեցիները, արտի խորը ցավով նայելով Այրվող Այգեստաններին, եկեղեցիներին, գերեզմաններին... Երկրորդ մասում ներկայացրինք Գ. Թահթայի «Այսպէս ապրեցանք» գիրքը, որը պատմում է իր ընտանիքի կրած տառապանքները 1915-1920 թուականներին:

Այս 2 մասերն էլ ներկայացնում են մեր ժողովրդի՝ մազապուրծ փրկուածների հաւաքական կերպարները: Թատրոնը բեմադրեց ՀՀ ժողովրդական դերասանուհի տիկ Ժենիա Ներսիսեանը: Ներկայացումը շատ բարձր գնահատուեց հանդիսատեսների կողմից:

5. Այս տարւայ ամավերջին հանդէսը նոյնպէս նուիրուած էր Հայոց Յեղասպանութեան 100 ամեայ տարելիցին, այս անգամ մենք ոգեկոչեցինք հայոց հերոսների յիշատակը, հանդէսի երկրորդ մասում մեր աշակերտները ներկայացրին Յովհաննէս Թումանեանի «Մասունցի Դաւիթ» էպոսը, որը ներկայացնում է մեր ժողովրդի հերոսական և ազատատենչ ոգին:

Օգտուելով առիթից Գ. Թահթեան Կիրակնօրեայ Ազգային Վարժարանի կողմից խորին շնորհակալութիւն եմ յայտնում դպրոցի բոլոր բարերարներին, հոգաբարձուներին, կրթական և ծնողական յանձնախմբերի անդամներին, ծնողներին, նախկին ծնողներին, վարժարանի բարեկամներին:

Շնորհակալութիւն բոլոր ծնողներին, որքեր գիտակցելով հայկական ինքնութեան համար՝ հայեցի կրթութեան անհրաժեշտութիւնը, իրենց հանգստի ժամերը զոհաբերում են, որպիսզի իրենց երեխաները անզլիական միջավայրում հայ մեծանան:

Շնորհակալութիւն մեր սիրելի ուսուցչուհիներին, ովքեր իրենց ուժն ու եռանդը չեն խնայում մեր երեխաների հայեցի կրթութեան և դաստիարակութեան համար:

Ցանկանում եմ բոլորիդ ուրախ ամառային արձակուրդներ:

Վերամուտ՝ սեպտեմբերի 6, 2015

Ռ Թաթուլեան
Տնօրինուհի





Անի Գինկ-Անտրրուուտի հետ

Նշանակելի օր մը եղաւ Անի Գինկ-Անտրրուուտի այցը մեր դպրոց՝ Ապրիլ 19-ին: Անին, որ վաւերագրական ֆիլմեր պատրաստող լրագրող մըն է, մեզի ներկայացուց նկարներու շարան մը՝ իր պատրաստած An Armenian Homecoming ֆիլմէն: Ներկայ էին մեր աշակերտները, ուսուցչական կազմը եւ ծնողներէն շատեր:

Ֆիլմը կը ցուցնէ Անիի մօր ու մօրաքրոջ առաջին ճամբորդութիւնը դէպի Մերսին՝ իրենց ծննդավայրը, որմէ փախած էին իրենց ընտանիքին հետ երբ մանուկներ էին: Անոնք Անիի ընկերակցութեամբ կ'երթային Մերսին իրենց պապենական տունը գտնելու յոյսով: Իրենց յիշողութեան մէջ կը հնչէր ծնողներուն ակնարկութիւնները՝ որ ջարդէն առաջ իրենք հարուստ ընտանիք եղած էին եւ ունէին մեծ ու գեղեցիկ տուն մը՝ մարմարէ աստիճաններով: Դժբախտաբար իրենց ընտանեկան նկարներուն մէջ չկար նոյնիսկ մէկ նկար իրենց շքեղ տունէն:

Այսպիսով անոնք ճամբայ կ'ելլեն՝ գտնելու իրենց հօրենական տունը, որուն ո՛չ նկարը ունէին, ո՛չ ալ ճշգրիտ հասցէն:

Անին մեզ գրաւեց իր հետաքրքրական բացատրութիւններով, ինչպէս նաեւ իր իրապաշտական մօտեցումով այնպիսի նիւթի մը շուրջ, որ դիւրութեամբ կրնար բռնկեցնել ներկաները:

Խօսքի աւարտին ներկաները առիթն ունեցան հարցումներ ուղղելու Անիին:

Օրինակ, թէ ինչպէս էր Թուրքերու վերաբերումը իրենց հանդէպ՝ երբ անոնք Մերսինի մէջ տարբեր մարդոց հետ շփուելով կը փորձէին գտնել իրենց տունը:

Անին շեշտեց գաղափարը թէ մեզի համար որպէս ջարդէն փրկուողներու թոռներ, կարելոր է մեր յիշողութիւնը արթուն պահելը:



Իր խորհուրդն էր որ մեր պապերէն լսած բոլոր պատմութիւնները, պզտիկ թէ մեծ, պահենք մեր մտքերուն մէջ եւ փորձենք հետապնդել կամ բացայայտել մեր անցեալը, որպէսզի այդ պատմութիւնները նոր իմաստ ստանան մեզի համար, եւ դառնան մեր ներկայ կեանքին հետ առընչուող ապրումներ:

Ֆիլմը կարելի է դիտել Youtube-ի վրայ https://www.youtube.com/watch?v=rwsr_WG_E_pE

Անմոռուկ Ծաղիկի Պատրաստութիւն



Ապրիլի 19ին Տիկ Արաքս Նազարեանի նախաձեռնութեամբ վարժարանի աշակերտները մասնակցեցան «Անմոռուկ» ծաղիկներու պատրաստութեան: Պզտիկները գունաւորեցին թղթէ անմոռուկները, որոնք տրուեցան ծնողներուն եւ ուսուցչական կազմին, ինչպէս նաեւ պատրաստեցին մեծ անմոռուկէ ծաղկեպսակ: Այն մէկ շաբաթ յետոյ զարդարեց վարժարանիս Յեղասպանութեան Հարիւրամեակին նուիրում հանդիսութեան բեմը:



Յեղասպանութեան Հարիւրամեակին նուիրում հանդիսութիւն



Ապրիլ 25. Վարժարանի հանդիսասրահին մէջ տեղի ունեցաւ Հայկական Յեղասպանութեան Հարիւրամեակին եւ վարժարանիս բարերար՝ Պր Գեորգ Թահթաեանին նուիրում ձեռնարկը:

Վարժարանիս տնօրէնուհի՝ Տիկ Ռուզաննա Թաթուլեան իր բացման խօսքին մէջ հակիրճ պատմականը եւ դրդապատճառները տուաւ այս վայրագ արարքին:

Յայտագիրը կը բաղկանար երկու մասերէ: Առաջին մասին, «Վանը կը Ծխայ 1915» խորագրով հատուածի մը ընթերցումն էր Տէր Յովհաննէս Աւագ Քին Սիմոնեանի յուշերէն: Հեղինակը՝ իր մտորումները կը յայտնէ Վան քաղաքը աւերակ եւ բոցերու մէջ տեսնելով, ապա սրտացաւ կը խօսի Վարագայ վանքին:

Երկրորդ մասին, ներկայացուեցան պատկերներ՝ Պր Գեորգ Թահթաեանի «Այսպէս Ապրեցանք» խորագրով յուշագրութենէն: Արուեստի բարձր մակարդակի մշակած եւ հասցուցած էր ՀՀ վաստակաւոր դերասանուհի Տիկ Ժենիա Ներսիսեանը: Պատկերները ներկայացուցին ուսուցչական կազմի անդամներ, ծնողներ եւ աշակերտներ:

Հանդիսութեան ներկայ էին նաեւ Թահթաեան ընտանիքի անդամներէն:

Բեմայարդարման պատասխանատուն էր Տիկ Արաքս Նազարեանը որ գծած էր Պր Գեորգ Թահթաեանի դիմանկարը եւ պատրաստած անմոռուկի ծաղկեպսակը: Չայնի եւ երաժշտութեան պատասխանատուն էր Տիկ Այդա Եղիգեանը:





Հարիրամեակի Համագաղութային Ձեռնարկ

Կիրակի, Ապրիլ 26-ին, մեր դպրոցը հրաւիրուած էր մաս կազմելու Ցեղասպանութեան նուիրուած հանդէսի մը, որ տեղի ունեցաւ Ս. Եղիշէ եկեղեցիին մէջ: Հանդիսութիւնը կազմակերպուած էր Մեծն Բրիտանիոյ Ցեղասպանութեան Հարիրամեակի Վարչութեան կողմէ: Այս միջոցառումին իրենց մասնակցութիւնը բերին գաղութի երեւելի անձնատրութիւններ եւ մեր համայնքի երկու միօրեայ վարժարանները: Նախորդ գիշեր, պաշտօնական հանդէսով մը,

մեր դպրոցը ներկայացուցած էր Գեորգ Թահթայի կեանքին նուիրուած թատրոն մը՝ հիմնուած իր ինքնակենսագրական եւ յուշագրական «Ինչպէս Ապրեցայ» գիրքին վրայ: Կիրակի օրը այդ թատրոնէն մի քանի տեսարաններ ներկայացուցինք եկեղեցիին մէջ, Տիկին Ժենիա Ներսիսեանի ղեկավարութեամբ եւ մասնակցութեամբ մի քանի ուսոցիչներու, ծնողներու եւ աշակերտներու: Շատ յուզիչ եւ տպաւորիչ էր մեր ներկայացումը:



Հարիրամեակի Հանդիսութիւն՝ Շարունակուած



Զրդ Դասարանի Աւարտական Քննությունները



Աւարտական դասարանի աշակերտները Մայիսի 3-ին եւ 10-ին մասնակցեցան հայերէն լեզուի GCSE-ի համարժէք մակարդակի քննություններուն , որ պատրաստուած էին մեր վարժարանի կրթական յանձնախումբէն՝ Տիկնայք Սիլվա Շամսատեանի, Տայան Ապանեանի եւ Պրն. Վաչէ Միմոնեանի կողմէ: Մեր քննությունները աշակերտներուն լեզուական՝ գրելու, կարդալու, խօսելու եւ ունկնդրելու, չորս կարողութիւնները կը ստուգեն:



Միացեալ Թագաւորութեան մէջ հայերէն լեզուի GCSE-ի թեկնածուներու սակաւաթիւ քանակին պատճառով, մեր քննությունները չեն պատրաստուիր Անգլիոյ քննական խորհուրդներու կողմէ եւ հետեւաբար, պաշտօնական ճանաչում չունին: Սակայն, տարիներու փորձառութիւնը ցոյց կու տայ որ Թահթեան վարժարանէն ներս մեր աշակերտներուն ստացած ուսումը եւ քննութեան վկայականը մեծ հիացմունք եւ հետաքրքրութիւն կ'առաջացնեն անգլիական բարձրագոյն կրթութեան բուհերուն մէջ՝ հայ երիտասարդներուն դիմումները քննարկելու աստն:

Մարզական Օր



Այս տարի, 17 Մայիսին ունեցանք դասարանային ընդհանուր մարզական օր մը որ շատ մեծ խանդավառութիւն ստեղծեց աշակերտներուն, ծնողաց եւ բոլոր ներկաներուն մէջ:

Աշակերտները ըստ տարիքի մասնակցեցան զանազան մրցումներու ինչպէս վազք, տոպրակով վազք, պարան ցատկէլ, գետնախնձոր ու դգալի վազք, սեղանի թենիս, ճատրակ եւ պասքէթ պօլի մրցաշարք:



Այս հաճելի, եռանդուն եւ զուարճալի օրուան աւարտին, Տնօրէնուհի Տիկին Ռ Թաթուլեան բաժնեց կարմիր, կապոյտ եւ նարնջագոյն խումբերու առաջին, երկրորդ եւ երրորդ դիրք գրաւողներուն վկայագիրները եւ մետալները:

Մեր մեծ երախտագիտութիւնը եւ շնորհակալութիւնը կ'ուզենք յայտնել Այտա Եղիգեանի, ուսուցիչներուն, հոգաբարձուներուն, օգնականներուն եւ բոլոր մասնակցողներուն:



Դպրոցէն ներս ունինք “Առաջարկներու Տուփ” մը եւ ձեզմէ կը խնդրենք որ ձեր առաջարկները, գաղափարներն ու տեսակէտները դպրոցի աշխատանքներու մասին՝ գետեղէք այդ տուփիկին մէջ:





Նաւապտոյտ՝ Հոգաբարձու Պր Շահէ Կիլեանի Հրաւերով



Անգամ մը եւս, հաճելի աւանդութիւն դարձած Պրն. Կիլեանի նաւապտոյտը տեղի ունեցաւ Շաբաթ օր, Յունիսի 13-ին: Առտուայ ժամը 11-էն, արեւմտահայ եւ արեւելահայ բարձր դասարաններու աշակերտները եւ ուսուցչուհիները հանդիպեցան վարժարանին բակը, ուրկէ ինքնաշարժներով ուղղուեցան դէպի նաւահանգիստ: Հոն կազմ-պատրաստ կը սպասէր «նաւապետ» Կիլեանը: Երիտասարդները խանդավառ տրամադրութեամբ զբօսանաւ ելան, երբեմն նոյնիսկ համարձակելով նաւավարելու Լոնտոնի Grand Canal ջրանցքէն: Կէսօրուան ճաշի դադար ունեցան ջրանցքի ափին գտնուող աւանդական անգլիական «փապ»ի մը մէջ: Պր Կիլեանը հիւրասիրեց բոլորին՝ երիտասարդներուն նախընտրած ճաշատեսակներով, որոնք ընթացքին կենացներ խմուեցան հիւրընկալողին, աշակերտներուն եւ հայկական վարժարանին հասցէին:

Դարձեալ զբօսանաւ ելանք եւ ուղղուեցանք դէպի կանաչապատ դաշտ մը, ուր բոլոր ներկաները առիթ ունեցան ճաշը մարսելու՝ rounders-ի խաղերու մասնակցելով: Ջրանցքի ափին թէյ եւ զանազան աղանդներ համտեսելէ ետք, ժամը հասաւ նաւահանգիստ եւ ապա տուն վերադառնալու:

Աշակերտներուն համար մեծ ուրախութիւն էր այդ օրուայ ծրագիրը, որ ամրապնդեց իրար միջեւ բարեկամական կապերը եւ ինչու չէ, հայկական ոգին:

Մարզական Օր՝ Շարունակուած



Դաշտահանդես



Դպրոցի դաշտահանդեսը տեղի ունեցավ հունիսի 21-ին ծնողական հանձնախմբի, հոգաբարձուների խմբի, ուսուցիչների և աշակերտների ուրախ մասնակցությամբ: Օրը հաջողված էր: Կազմակերպվել էին խաղեր, պարեր, ամեն տեսակ զվարճալիքներ: Բոլորը զբաղված էին սպասված դաշտահանդեսի վառ մասնակցությունն ապահովելով: Հատկապես ծնողական հանձնախումբը, որ ջանասիրաբար պատրաստել էր տեսակ-տեսակ ուտելիքներ, համեղ աղցաններ, անուշաբույր բլիթներ ու ըմպելիքներ: Մասնակիցների ուրախ տրամադրությունն ապահովված էր, դաշտահանդեսը՝ կայացած: Օրը անմոռանալի էր ու հիշարժան: Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում բոլոր մասնակիցներին, հոգեբարձուներին, ուսուցիչներին և ծնողական հանձնախմբին՝ ակտիվ գործունեության համար:



Մարզական Օրէն Տեսարաններ



Ամավերջի եւ Վկայականաց Բաշխման Հանդես



Կիրակի Յուլիս 5-ին, տեղի ունեցաւ Վարժարանիս ամավերջի եւ վկայականաց բաշխման հանդեսը: Աշակերտները հանդես եկան ասմունքով, երգով, պարով եւ թատերգութեամբ, մեծ ուրախութիւն եւ հպարտանք պատճառելով իրենց ծնողաց եւ հարազատներուն:



Յեղասպանութեան հարիւրամեակը ոգեկոչելով, որպէս խորհրդանիշ հայ ժողովուրդի գոյատեւման եւ պայքարող ոգիին, բեմադրուեցան հատուածներ՝ Յովհաննէս Թումանեանի «Մասունցի Դաւիթ» դիւցազներգութենէն - *epic*: Գնահատելի աշխատանք տարին վարժարանի բարձրագոյն դասարաններու աշակերտները, ուսուցչական կազմը եւ մանաւանդ Տիկ Ժենիա Ներսիսեանը, որ ղեկավարեց եւ մասնակցեցաւ բեմադրութեան:



Վկայականաց բաշխումը կատարեց Մեծն Բրիտանիոյ եւ նորընտիր առաջնորդ՝ Գերաշնորհ Սրբազան Հայր Յովակիմ Եպս. Մանուկեանը: Ապա մեր ասարտականները իրենց ուղերձներով հանդես եկան եւ իրենց սերն ու զգացմունքները արտայատեցին սիրելի վարժարանին հանդէպ՝ յուզուելով եւ յուզելով ներկաները:



Համահայկական խաղեր - Հայաստան



Գ Թահթեան Վարժարանի աշակերտների, ծնողների, ուսուցիչների եւ հոգաբարձուների մասնակցութիւնը Համահայկական խաղերին:



2015-2016 Տարեշրջան



Առաջին եռամսեակ 06 Սեպտ. 2015 – 13 Դեկտ. 2015	
06 Սեպտեմբեր	Վերամուտ
18 Հոկտեմբեր	Մշակույթի Օր - Թարգմանչաց Տօն
25 Հոկտեմբեր	Արձակուրդ
22 Նոյեմբեր	Ծնողական Ընդհանուր Ժողով
13 Դեկտեմբեր	Նոր Տարուայ Հանդես
Երկրորդ եռամսեակ 10 Յունուար 2016 – 13 Մարտ 2016	
06 Փետրուար	Ընդհանուր Գիտելիքներու Մրցում
06 Փետրուար	Մայրերու Օր
07 Փետրուար	Արձակուրդ
21 Փետրուար	Վարդանանց Տօն
13 Մարտ	Զատկուայ Հանդես
Երրորդ եռամսեակ 03 Ապրիլ 2016 – 10 Յուլիս 2015	
17 Ապրիլ	Գեղարուեստի Օր
24 Ապրիլ	Ցեղասպանութեան Նուիրուած Ձեռնարկ
22 Մայիս	Մարզական Օր
24 Մայիս	Արձակուրդ
26 Յունիս	Դաշտահանդես
10 Յուլիս	Ամավերջի Հանդես

Our News in Brief

- Beirut-born documentary film maker and producer Ani King-Underwood visited our school on 19 April to present a slideshow of images from her film “An Armenian Homecoming”. She captured the audience with her moving presentation and her message of ‘keeping the memory alive’. Available on Youtube https://www.youtube.com/watch?v=rwsr_WG_EpE
- On Saturday 25 April we presented a concert dedicated to the Centenary of the Armenian Genocide in remembrance of the atrocities and our school founder and benefactor, Mr Kevork Tahta, himself a survivor of the genocide.
- On Sunday 26 April our school took part in an event held at St Yeghicheh Church dedicated to the commemoration of the Armenian genocide and organised by the Genocide Centennial Committee of UK. We presented several scenes from the play based on Kevork Tahta’s life.
- On May 17 we held our very popular and exciting sports’ day. Pupils of all ages participated in various races and received certificates and medals accordingly.
- The graduating class was treated to a scenic boat trip as is tradition and a pub lunch courtesy of our school’s governor and benefactor, Mr. Shahe Gulian.
- The Parents’ Association organised our annual and highly anticipated Summer BBQ that incorporated a joyful atmosphere with fun and games and tasty food. Thank you to all the organisers and helpers.
- On Sunday July 05, the End of Year Performance and Graduation Ceremony took place in presence of several guests of honour. Echoing the Centenary of the Armenian Genocide, and as a symbol of the survival and fighting spirit of the Armenian people, the performance was dedicated to our national epic hero ‘David of Sassoon’.

Խմբագիրներ՝ Տիկ Մարիանա Ասիսեան, Տիկ Մարո Միմոնեան, Տիկ Նայիրի Միսիսեան
 և Տիկ Սոնա Գալենտերեան
 Խորհրդատու՝ Տիկ Ռուզաննա Թաթուլեան
 Էջադրում՝ Տիկ Լենա Գիլիսանճեան